

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հաստատված՝

2013թ. հուլիսի 26-ին կայացած ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեսլական

Մինչև 2020 թվականը 3 անգամ ավելացնել Հայաստանի՝ խաղողի գինու արտադրության ծավալները (մինչև 15-20 մլն. լիտր տարեկան) ներքին սպառման և արտահանման ծավալների աճի հաշվին՝ Հայաստանը դիրքավորվելով որպես խաղողագործության և գինեգործության ավանդական երկիր և առաջարկելով օրիգինալ բարձորակ գինիներ միջին և բարձր գնային սեգմենտում:

Արժեքային առաջարկի բաղադրիչները

Ավանդույթ/պատմություն

Խաղողի և գինեգործության բնօրրան

Յուրահատկություն

Տեղական յուրահատուկ խաղողի սորտեր



Բնություն և առողջություն

Արև, ջուր և հող
Խաղողագործության բարձրադիր գոտիներ

Գինեգործության հիմնական ցուցանիշների թիրախները 2015 և 2020 թվականների համար:



Թողարկում, մլն. ԱՄՆ դոլար	11.8	27.1	55.3
Արտահանում, մլն. ԱՄՆ դոլար	2.5	10.7	29.5
Արտահանման բաժինը, %	21%	~40%	~53%

Գինու արտադրության թիրախային ծավալները և հումքի ապահովման համար անհրաժեշտ այգետարածքները 2012-2020

Գինու արտադրության կանխատեսվող թիրախային ծավալները և հումքի ապահովման համար անհրաժեշտ այգետարածքները 2012-2020 թթ.





Ի-Վի Քոնսալթինգի վերլուծություն

Գինու արտադրության կանխատեսվող թիրախներն ապահովելու համար անհրաժեշտ է հիմնել մոտ 850 հա լրացուցիչ այգետարածքներ

Ըստ կանխատեսված թիրախների գինու արտադրությունը հաստատուն տեմպերով կաճի և 2020 թ. դրությամբ Հայաստանում արտադրված գինու ծավալները կհասնեն մոտ 17.5 մլն. լիտրի: Այդ ծավալների արտադրության համար անհրաժեշտ խաղողի հումքն ապահովելու համար ներկայումս առկա գինու համար պիտանի խաղողի այգետարածքները բավարար չեն: Թեև չկա պաշտոնական, ճշգրտված ցուցանիշ, ոլորտի փորձագետները ներկայումս Հայաստանում գինու համար պիտանի հողատարաքների չափը գնահատում են մոտ 2500 հա: Այս այգետարածքները բավարար են մինչև 2017 թ. գինու արտադրությունը հումքով ապահովելու համար: Սկսած 2018 թ. անհրաժեշտ են լրացուցիչ բերքատու այգետարածքներ՝ որոնց հիմնման գործընթացը անհրաժեշտ է սկսել ոչ ուշ քան 2015թ.-ը: Գինու արտադրության ծավալների աճի 2020 թ. թիրախը ապահովելու համար անհրաժեշտ է հիմնել 800-850 հա նոր այգետարածքներ:

Վերոնշյալ թիրախներին հասնելու նախապայմանը գինեգործության զարգացման ռազմավարության իրականացումն է:

*Որպես հաշվարկի հիմք է ընդունվել մեկ հա.-ից 7 փոննա բերքատվությունը

Թիրախային արտահանման շուկաները

Առաջնային թիրախային շուկաներ	ՀՀ-ից արտահանումը, լիտր/ Արտահանման բաժինը ՀՀ ընդհանուր արտահանման մեջ 2011	ՀՀ-ից արտահանումը, լիտր/ Արտահանման բաժինը ՀՀ ընդհանուր արտահանման մեջ 2015	ՀՀ-ից արտահանումը, լիտր/ Արտահանման բաժինը ՀՀ ընդհանուր արտահանման մեջ 2020
Ռուսաստան	600,000 85%	2,500,000 85%	5,500,000 75%
Չինաստան*	400 0.01%	160,000 5.5%	1,300,000 18%
Երկրորդային թիրախային շուկաներ			
ԱՄՆ	42,000 6%	150,000 5%	300,000 4%
Ֆրանսիա	8,000 1%	22,000 1%	45, 0001%
Այլ շուկաներ	105,000 8%	125,000 4%	155,000 2%

- Ռուսաստանը և Չինաստանն ընտրված են որպես առաջնային շուկաներ՝ հաշվի առնելով վերջիններս ամենաբարձր արտահանման գրավչության գնահատականը: Ենթադրվում է այս շուկաների վրա կենտրոնացնել արտահանման խթանման և միջազգային մարքեթինգի հիմնական մեխանիզմները:
- Որպես երկրորդային թիրախներ ընտրված են ԱՄՆ-ը և Ֆրանսիան՝ հաշվի առնելով վերջիններում առկա մեծաթիվ հայկական բնակչությունը և կազմակերպված Սփյուռքը:

** Չինաստանի շուկան երկարաժամկետ հեռանկարում հանդես կգա որպես հարթակ Հարավ-Արևելյան Ասիայի այլ երկրներ դուրս գալու համար*

Ռուսաստանի շուկա. Հայկական արտահանման թիրախներ

	2011	2015	2020
Մեկ շնչի հաշվով սպառումը, լ	8.6	10.1	12.3
Սպառման ընդհանուր ծավալը, մլն. լ	1,200	1,400	1,700
Ռուսաստանի համախառն ներմուծումը, մլն. լ	230	250	275
Հայաստանի արտահանումը, մլն. լ	0.6	2.5	5.5
Հայաստանի կշիռը Ռուսաստանի ներմուծման մեջ, %	0.3%	1.0%	2.0%
Ռուսաստան արտահանման բաժինը ՀՀ գինու ընդհանուր արտահանման մեջ	85%	85%	75%

- Հաշվարկներն կատարված են հիմք ընդունելով Ռուսաստանի բնակչության թվի փոփոխության* և գինու սպառման դինամիկան 2012-2020 թթ.:
- Կանխատեսվում է, որ 2012-2020 թթ. Ռուսաստանում գինու մեկ շնչին ընկնող սպառումը կաճի տարեկան միջինում մոտ 4%:
- Շշալցված գինու ներմուծման ծավալների աճը 2012-2020 թթ. գնահատվում է տարեկան միջինում մոտ 2%:
- Ռուսաստանի գինու շուկան դրամային արժողությամբ 2015 թ. կանխատեսվում է հասնել մինչև 10,9 միլիարդ ԱՄՆ դոլարի** :

** Բնակչության թվի գնահատումը կատարված է ՄԱԿ-ի կանխատեսումների հիման վրա*
** *Euromonitor Russia' Retail Wine Market*

Չինաստանի շուկա. Հայկական արտահանման կանխատեսում

	2011	2015	2020
Մեկ շնչի հաշվով սպառումը, լ	1.3	1.6	2.00
Սպառման ընդհանուր ծավալը, մլն. լ	1,700	2,200	2,800
Չինաստանի համախառն ներմուծումը, մլն. լ	190	540	1400
Հայաստանի, արտահանումը, լ	420	160,000	1,350,000
Հայաստանի կշիռը Չինաստանի ներմուծման մեջ, %	0.00%	0.03%	0.10%
Չինաստան արտահանման բաժինը ՀՀ գինու ընդհանուր արտահանման մեջ	0.1%	5.5%	18%

- Հաշվարկներն կատարված են հիմք ընդունելով Չինաստանի բնակչության թվաքանակի* և գինու սպառման դինամիկան 2012-2020 թթ.:
- Կանխատեսվում է, որ 2012-2016 թթ. Չինաստանում գինու մեկ շնչին ընկնող սպառումը կաճի տարեկան միջինում մոտ 5.5%, իսկ 2016-2020 թթ.՝ միջինում մոտ 4%:
- Համախառն սպառումը Չինաստանում կանխատեսվում է 2,225 մլն. լիտր 2016 թ.**
- Շշալցված գինու ներմուծման ծավալների աճը 2012-2016 թթ. գնահատվում է տարեկան միջինում մոտ 30%, իսկ 2016-2020 թթ.՝ միջինում մոտ 20%:

**Բնակչության թվի գնահատումը կատարված է ՄԱԿ-ի կանխատեսումների հիման վրա*
***Աղբյուր: AT Kearney, China Wine Consumption Report*

Զարգացման ռազմավարության հիմնական թիրախներ

Հիմնվելով ոլորտի գնահատման և զարգացման հնարավորությունների ուսումնասիրության արդյունքների վրա՝ գինեգործության զարգացման ռազմավարությունը պետք է թիրախի 2 հիմնական խնդիր.

Բարձրորակ և միջազգայնորեն մրցունակ արտադրանքի արտադրության աճ

- Հումքի որակի բարձրացում և բազայի ընդլայնում
- Արտադրական հզորությունների վերազինում և ընդլայնում
- Գինու բարձր և կայուն որակի ապահովում

Վաճառքների ավելացում

Արտահանում

Առկա շուկաների ընդլայնում և մուտք նոր շուկաներ

Տեղական շուկա

Գինու ներքին սպառման ծավալների աճ

Որակյալ և մրցունակ արտադրանքի ապահովումն առաջնային է, առանց որի անհնար է հասնել ռազմավարության այլ թիրախների իրականացման:

Ռազմավարության նպատակներին հասնելու և զարգացման սահմանափակումները վերացնելու համար առանձնացվել են 6 ռազմավարական ուղղություններ, որտեղ անհրաժեշտ են կենտրոնացնել ռեսուրսները և ջանքերը: Դրանք են.

1. Հումքի ապահովում
2. Իրավական դաշտի բարելավում
3. Ֆինանսական աջակցություն
4. Կարողությունների զարգացում
5. Միջազգային շուկաներում առաջմղում
6. Գինու ներքին սպառման խթանում

Զարգացման ռազմավարություն

Զարգացման ռազմավարական ուղղություններ

1 Հումքի ապահովում

1.1 Այգետարածքների գույքագրում և մոնիտորինգի վարում
1.2 Բնական աղետների և հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացում
1.3 Խաղողի սորտերի բարելավման և սելեկցիայի ուղղությամբ հետազոտական աշխատանքներ
1.4 Խաղողագործության զարգացման ծրագրի իրականացում

2 Իրավական դաշտի և որակի վերահսկման համակարգի բարելավում

2.1 Օրենսդրության համապատասխանեցում եվրոպական կանոնակարգերին
2.2 Միջազգային չափանիշներին համապատասխան լաբորատոր ենթակառուցվածքի ապահովում
2.3 Անդամակցում խաղողի և գինու միջազգային կազմակերպությանը (OIV)

3 Ֆինանսական աջակցություն

3.1 Խաղողագործության և գինեգործության զարգացման հատուկ ֆինանսավորման մեխանիզմի ստեղծում

4 Կարողություն-ների զարգացում

4.1 Մասնագետների պատրաստման և վերապատրաստման մեխանիզմների բարելավում

5 Միջազգային շուկաներում առաջմղում

5.1 «Հայկական գինիներ» միության ստեղծում
5.2 Մասնակցություն միջազգային ցուցահանդեսների՝ միասնական «Հայկական գինիներ» բրենդով
5.3 Նպատակային շուկաներում համտեսների կազմակերպում
5.4 «Հայկական գինիներ» ինտերնետային կայքի ստեղծում
5.5 Շուկայի հետազոտությունների և վերլուծությունների տրամադրում արտահանողներին
5.6 Հայկական գինիների առաջմղում մասնագիտական մամուլում և հրապարակումներում
5.7 Գինու զբոսաշրջության զարգացում Հայաստանում
5.8 Նպատակային շուկաներում հայկական գինու օրվա անցկացում

6 Գինու ներքին սպառման խթանում

6.1 Գինու փառատոնների անցկացում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հիմնախնդիր

Գինեգործության ոլորտի զարգացման ամենակրիտիկական խնդիրը ոլորտին որակյալ և համապատասխան քանակությամբ խաղողի հումքով ապահովումն է: Հայկական գինիների մրցակցային առավելության հիմքում պետք է լինեն հայկական էնդեմիկ սորտերի օգտագործումը, հատկապես կարմիր: Դրանց ուսումնասիրությունը, սելեկցիան և այգետարածքների զարգացումը պետք է դառնա ռազմավարության կիզակետը: Հայաստանում խաղողագործության զարգացման համար անհրաժեշտ է ոլորտի համալիր ռազմավարություն մշակված ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից, որը կընդգրկի խաղողագործության բոլոր ուղղությունները (սեղանի, գինու, կոնյակի) և կներառի սույն նախաձեռնության գործողությունները՝ գինեմետ խաղողագործության մասով:

«Հումքի ապահովում» ռազմավարական նախաձեռնության հիմնական նպատակն է ապահովել համապատասխան աջակցման մեխանիզմներ խաղողի հումքի որակի բարձրացման և այգետարածքների ընդարձակման համար:

Արդյունքում ակնկալվում է նպաստել գինեմետ խաղողի սորտերի որակի բարելավմանը և գինեմետ սորտերի նոր այգիների հիմնմանը:

Հիմնական քայլեր

- Այգետարածքների և խաղողագործության արդյունքների վերաբերյալ համապարփակ տեղեկատվության ապահովում
- Առկա այգետարածքների որակի, խաղողի մշակման տեխնոլոգիաների բարելավման և նոր այգետարածքների տնկման խթանում՝ ստեղծելով համապատասխան աջակցման մեխանիզմներ
- Հայկական տեղական սորտերի սելեկցիային և բարելավմանն ուղղված աշխատանքներ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
1.1. Այգետարածքների գույքագրում և ամենամյա մոնիտորինգի վարում	Հայաստանում առկա խաղողի այգետարածքների վերաբերյալ համապարփակ և հստակ տեղեկատվության առկայություն

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
1.1.1. Այգետարածքների ռեեստրի ստեղծում և տարեկան արդյունքների հրապարակում Ակնկալվում է արդյունքում ունենալ համապարփակ տվյալների բազա (հատուկ ծրագրային ապահովմամբ) խաղողի այգետարածքների, մշակվող խաղողի սորտերի, այգիների վիճակի, բերքատվության համապարփակ տվյալների բազա: Տվյալների բազայի համար հիմք կհանդիսանա Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միասնական բազան, որը պարունակում է բազային տեղեկատվություն այգետարածքների վերաբերյալ: 2013թ-ին իրականացվելու է խաղողի այգետարածքների համատարած գույքագրում խաղողագործ մասնագետների կողմից, որի արդյունքների և կադաստրի տվյալների բազայի հիման վրա կձևավորվի այգետարածքների ռեեստրը: Տվյալների բազան թարմացվում է յուրաքանչյուր տարի Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տարվա ընթացքում կատարված փոփոխությունների հիման վրա: Տարեկան մոնիտորինգը կիրականացվի Գյուղատնտեսության աջակցման մարզային կենտրոնների կողմից:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե Փորձագիտական խումբ, որն իրականացնելու է գույքագրումը Գյուղատնտեսության աջակցման մարզային կենտրոններ	Բյուջե՝ 51մլն դրամ (նախնական)(այգետարածքների գույքագրում, ծրագրային փաթեթի և տվյալների բազայի ստեղծում) Տարեկան 3 մլն դրամ տարեկան մոնիտորինգի իրականացման համար Աղբյուր՝ ՀՀ կառավարություն, հնարավոր է ներգրավել աջակցություն միջազգային դոնոր կազմակերպություններից	Նախապատրաստում 2013թ. Փետրվար-օգոստոս Ամբողջական գնահատում 2013-2015թթ. ընթացքում Ամենամյա մոնիտորինգ սկսած 2014թ.ից-ըստ մարզերի ռեեստրի պատրաստվածության աստիճանի

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
1.1. Այգետարածքների գույքագրում և ամենամյա մոնիտորինգի վարում	Հայաստանում առկա խաղողի այգետարածքների վերաբերյալ համապարփակ և հստակ տեղեկատվության առկայություն

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
1.1.2. Արբանյակով կատարված թվային լուսանկարների միջոցով Հայաստանում առկա խաղողի այգետարածքների այլընտրանքային քանակական և որակական գնահատում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե Հնարավոր իրականացնող կառույց՝ Հայաստանի պետական ագրարային համալսարանի հողաշինության և ԱՏՀ (GIS) լաբորատորիա *Նշում՝ լաբորատորիան հիմնվել է Եվրոմիության աջակցությամբ և ունի բոլոր անհրաժեշտ լիցենզիոն ծրագրային ապահովման փաթեթները և վերապատրաստված մասնագետներ*	Բյուջե՝ 15մլն. դրամ (նախնական) Աղբյուր՝ ՀՀ կառավարություն, հնարավոր է ներգրավել աջակցություն միջազգային դոնոր կազմակերպություններից	2013թ. օգոստոս – դեկտեմբեր

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
1.2. Բնական աղետների և հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացում	Նվազագույնի հասցնել աղետների և հիվանդությունների հնարավոր բացասական ազդեցությունը խաղողի բերքի որակի և քանակի վրա

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
1.2.1. Հակակարկտային կայանների արդյունավետության ուսումնասիրություն	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Բյուջե՝ 4 մլն. ՀՀ դրամ /փորձագետների կողմից ուսումնասիրության անցկացման համար/ Աղբյուր՝ հնարավոր է ներգրավել աջակցություն միջազգային դոնոր կազմակերպություններից	Սկսած 2013թ.ից
1.2.2 Հայաստանի Հանրապետությունում 2014-2016թթ. հակակարկտային պաշտպանության համակարգի զարգացման ծրագրի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում *	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն		Վերջնաժամկետ՝ 2013թ. դեկտեմբեր

* ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել հակակարկտային պաշտպանության համակարգի ընդլայնման ծախսերի 2014-2016թթ. հայտը՝ միջնաժամկետ ծախսային ծրագրում ներառելու համար:

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
1.2. Բնական աղետների և հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացում	Նվազագույնի հասցնել աղետների և հիվանդությունների հնարավոր բացասական ազդեցությունը խաղողի բերքի որակի և քանակի վրա

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
1.2.3 Հանձնաժողովի ստեղծում, որը կուսումնասիրի և մասնագիտական եզրակացություն կներկայացնի հետևյալ հարցերի շուրջ. • Ֆիլոքսերազերծ շրջաններում ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների օգտագործման նպատակահարմարության վերաբերյալ քննարկում և եզրակացության ներկայացում ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդին	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական տեսչություն, Գինեգործների միություն, Հայաստանի ագրարային համալսարան, տեղական և միջազգային փորձագետներ	-	Մինչև 2013թ. դեկտեմբեր

*Ֆիլոքսերիայի բռնկման դեպքում հնարավոր վնասների փոխհատուցման գումարը գնահատվում է 1,1 -1,2 մլրդ. դրամ:
Ապահովագրական հիմնադրամի ձևավորման աղբյուր կարող է հանդիսանալ խաղողի հումքով ոգելից խմիչքների ակցիզային հարկի որոշակի մասի հատկացումը:

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
1.3. Խաղողի սորտերի բարելավման և սելեկցիայի ուղղությամբ հետազոտական աշխատանքների իրականացում	Ապահովել անհրաժեշտ որակի և քանակի խաղողի տնկիներ Հայաստանում այգետարածքների ընդլայնման և ստացվող բերքի որակը բարձրացնելու համար

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
1.3.1. Հետագա բազմացման նպատակով գինու արտադրության համար մեծ ներուժ ունեցող յուրաքանչյուր տարի հայկական խաղողի 2-3 սորտերի ընտրության ու բարելավման ուղղությամբ սելեկցիոն աշխատանքների և այդ սորտերի խաղողի բերքի վինիֆիկացիայի իրականացում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն Հայաստանի ագրարային համալսարան Գինեգործների միություն	Բյուջե՝ 40 մլն. դրամ Աղբյուր՝ ՀՀ կառավարություն, հնարավոր է ներգրավել աջակցություն միջազգային դոնոր կազմակերպություններից	2013-2015 թվականներ, տարեկան ընտրություն սկիզբ՝ 2013թ. սեպտեմբեր

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
1.3. Խաղողի սորտերի բարելավման և սելեկցիայի ուղղությամբ հետազոտական աշխատանքների իրականացում	Ապահովել անհրաժեշտ որակի և քանակի խաղողի տնկիներ Հայաստանում այգետարածքների ընդլայնման և ստացվող բերքի որակը բարձրացնելու համար

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
1.3.2. Ընտրված որակյալ խաղողի սորտերի տնկարանի ստեղծում • Տնկարանի ստեղծման ծրագրի և գործառնական մոդելի մշակում • Հիմնադրման և օպերացիոն ծախսերի և եկամուտների գնահատում • Տնկարանի հիմնում պետական աջակցությամբ Որպես այլընտրանքային մոդել կարող է հանդիսանալ գործող տնտեսությունների կողմից պետական պատվերով տնկիների աճեցումը: Ակնկալվում է խաղողագործական տնտեսություններին ապահովել որակյալ տնկիներով՝ արտոնյալ պայմաններով:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն Տնկարանի օպերատոր կազմակերպություն	Բյուջե՝ Նախնական գնահատում. 40 մլն ՀՀ դրամ ներդրում, 55-60 մլն. դրամ տարեկան ծախս Հաշվարկները կատարված են տարեկան 300 հա խաղողի այգետարածք հիմնելու համար անհրաժեշտ տնկիներ ապահովելու համար: Ենթադրվում է, որ տնկարանը կգործարկվի առկա տնկարանների բազայի հիման վրա, չի ներառում տարածքի գնում: Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ կառավարություն մասնավոր ներդրողի հետ համագործակցությամբ	Նախապատրաստում 2013թ.՝ Տնկարանի հիմնման ծրագիր Տնկարանի հիմնում 2014թ.ին

** Այն ենթադրում է գինու արտադրության համար մեծ պոտենցիալ ունեցող տեղական սորտերի ընտրություն և բազմացում: Երկարաժամկետ հեռանկարում անհրաժեշտ է գիտահետազոտական աշխատանքներ տանել նաև կլիմայի փոփոխության հետ կապված սորտերի ընտրության ուղղությամբ:*

*** Ներկայումս անհատական նախաձեռնությամբ կատարվել են Արենի սորտի սելեկցիայի աշխատանքներ և ստացվել է 5000 որակյալ տնկի, որոնք նախատեսվում է բազմացնել և տրամադրել անհատ խաղողագործների*

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 1.4. Խաղողագործության ոլորտի զարգացման ծրագիր	Որակական և քանակական հատկանիշներով կայացած հումքի բազա

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ Ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ/ պարբերականություն	Վերջնական/ ընթացիկ արդյունք
1.4.1 Խաղողագործության զարգացման ռազմավարության մշակում և հաստատում	*ՀՀ գյուղատնտեսության նախարարություն*	-	2013թ. օգոստոս - սեպտեմբեր	Գինեգործության ոլորտի զարգացման ծրագրի նախապայմանների ստեղծում
1.4.2 Խաղողագործության ոլորտի զարգացման ռազմավարության գործողությունների ծրագրի մշակում, համաձայնեցում և իրագործում *	*ՀՀ գյուղատնտեսության նախարարություն*	-	2015թ. դեկտեմբեր Նախապայման՝ այգետարածքների իրավիճակի համալիր գնահատման արդյունքներ	Գինեգործության ոլորտի ընդլայնմանը զուգահեռ խաղողագործության ոլորտի համաքայլ զարգացում

*Խաղողագործության զարգացումը պետք է դիտարկվի գինեգործական արտադրանքի համընդհանուր զարգացման համատեքստում և բխի գինու և կոնյակի արտադրությունների զարգացման ռազմավարություններից:

Այն ենթադրում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից խաղողագործության զարգացման հատուկ ծրագրի մշակում և իրագործում և կներառի սույն ռազմավարության հումքի ապահովման ռազմավարական ուղղության շրջանակներում նախատեսված գործողությունները:

Հիմնախնդիր

Գինեգործության ոլորտի միջազգայնացման կարևոր նախադրյալ է ոլորտի կանոնակարգման և որակի վերահսկման համակարգի ամբողջականացումը և համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Այս առումով «Իրավական դաշտի բարելավում» ռազմավարական նախաձեռնության հիմնական նպատակն առաջնային խնդիրներից է Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին ՀՀ օրենքի 2009թ.-ին ԵՄ կողմից ընդունված 606/2009 նոր կանոնակարգի դրույթներին համապատասխանության գնահատումը և անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխությունների իրականացումը, համապատասխան տեխնիկական կանոնակարգերի ընդունումը և մասնագիտացված որակի վերահսկման համակարգի ձևավորումը: Հայաստանի գինեգործության ոլորտի միջազգայնացմանը կնպաստի նաև անդամակցությունը միջազգային մասնագիտացված կառույցներին:

Հիմնական գործողություններ

- Առկա օրենսդրության և կանոնակարգերի համապատասխանեցում եվրոպական չափանիշներին
- Համալիր փորձաքննություններ անցկացնող անկախ լաբորատոր կառույցի ստեղծում
- Հայաստանի անդամակցում Խաղողի և գինու միջազգային կազմակերպությանը

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
2.1 Օրենսդրության համապատասխանեցում եվրոպական կանոնակարգերին	Հստակ և եվրոպական չափանիշներին համապատասխանող իրավական դաշտ և գինու որակի վերահսկման մեխանիզմերի ստեղծում և կիրարկում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
2.1.1. Գինեգործության վերաբերյալ օրենսդրության համապատասխանեցում ԵՄ 606/2009 կանոնակարգին Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին ՀՀ օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում Գինեգործական արտադրանքին ներկայացվող պահանջների և թույլատրելի գինեգործական մեթոդների ու մշակումների տեխնիկական կանոնակարգ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն Հայաստանի գինեգործների միություն	Բյուջե՝ միջազգային փորձաքննության կարիք Ֆինանսավորման աղբյուր՝ Դոնոր կազմակերպություններ	2012 դեկտեմբեր-2013 թթ. դեկտեմբեր

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
2.2 Միջազգային չափանիշներին համապատասխան լաբորատոր ենթակառուցվածքի ապահովում	Գինու համալիր փորձաքննությունների անցկացումն ապահովող ժամանակակից անկախ լաբորատորիայի առկայություն

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
2.2.1 Հայաստանում առկա լաբորատորիաների կողմից իրականացվող փորձաքննությունների միջազգային չափանիշներին համապատասխանելիության ուսումնասիրություն և եզրակացության/առաջարկության ներկայացում ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհուրդ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն Ոլորտների միություններ, մասնավոր ընկերություններ	Լաբորատոր ենթակառուցվածքի բարելավմանն /ստեղծման/ ուղղված գործողությունները կարող են իրականացվել ԵՄ-ի CIB աջակցության ծրագրի շրջանակներում:	Լաբորատոր փորձաքննությունների միջազգային չափանիշներին համապատասխանելիության ուսումնասիրություն 2013թ. հոկտեմբեր

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
2.3 Անդամակցում խաղողի և գինու միջազգային կազմակերպությանը (OIV)	Հայաստանը որպես OIV-ի անդամ օգտվում է կազմակերպության տեղեկատվական և մեթոդաբանական ռեսուրսներից

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
2.3.1 Բանակցություններ և դիմում (OIV)-ին՝ Հայաստանի անդամագրման նպատակով: Կազմակերպությանը կարող են անդամակցել միայն երկրներ և անդամակցման դիմումը պետք է կատարվի երկրի մակարդակով: Ներկայումս 45 երկիր անդամակցում է OIV-ին, այդ թվում բոլոր հիմնական հին և նոր երկրների արտադրողները:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Բյուջե՝ 5.5 մլն. դրամ, տարեկան Աղբյուր՝ ՀՀ կառավարություն	OIV –ի հետ բանակցություններ՝ 2013թ. հունիս Անդամակցելու վերջնաժամկետ՝ 2013թ դեկտեմբեր
2.3.2 Անդանակցություն ԱՊՀ ագրոարդյունաբերական համալիրի հարցերով միջկառավարական խորհրդին առընթեր խաղողագործության և գինեգործության համակարգող հանձնաժողովին	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	-	2013թ. դեկտեմբեր

Հիմնախնդիր

Գինեգործության ոլորտի արտադրանքի ծավալների ընդլայնման և որակի բարձրացման կրիտիկական պահանջներից են հումքի բազայի ընդլայնումը և գինեգործական արտադրությունների վերազինումը: Նոր այգետարածքների հիմնումը և արտադրությունների վերազինումը պահանջում են զգալի ֆինանսական միջոցներ, ինչի պատճառով շատ գյուղացիական տնտեսություններ և արտադրողներ խուսափում են նման ներդրումներ կատարելուց:

«Ֆինանսական աջակցություն» ռազմավարական նախաձեռնության հիմնական նպատակն է ապահովել հատուկ արտոնյալ ֆինանսավորման մեխանիզմներ, որոնք խթան կհանդիսանան և կաջակցեն արտադրողներին և գյուղացիական տնտեսություններին ընդլայնել այգետարածքները և վերազինել արտադրությունները:

Հիմնական գործողություններ

- Այգետարածքների ընդլայնման և արտադրությունների վերազինման համար հատուկ արտոնյալ ֆինանսավորման մեխանիզմների մշակում և գործարկում

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
3.1 Խաղողագործության և գինեգործության զարգացման հատուկ ֆինանսավորման մեխանիզմի ստեղծում	Հատուկ ֆինանսավորման մեխանիզմի միջոցով ընդլայնված խաղողի այգետարածքներ և վերազինված գինու արտադրություններ

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
3.1.1. Հատուկ արտոնյալ ժամանակահատվածով և տոկոսադրույքով վարկավորման մեխանիզմի ստեղծում այգետարածքների ընդլայնման համար և վարկավորման իրականացում Վարկավորման նախապայմաններ կլինեն միայն ընտրված որոշակի սորտերի (հայկական գինեգործության տեսանկյունից հեռանկարային) այգիների հիմնումը և ֆիլոքսերադիմացկուն արմատակալների կիրառումը: Նախատեսվում է, որ կտնկվեն այգետարածքներ մոտ 50 հա 2014թ. և 200 հա 2015 թ.: Այս տարածքների կեսը՝ 50 հա 2014թ. և 100 հա 2015 թ. նախատեսվում է հիմնել տրամադրված վարկային միջոցների հաշվին:	Խաղողի այգետարածքների համար վարկավորման և սուբսիդարվորման մեխանիզմի ստեղծում՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն Ֆինանսավորում՝ ՀՀ բանկեր և վարկային կազմակերպություններ	Բյուջե՝ մոտ 64 մլն. դրամ 2014-2015թթ. վարկի տոկոսադրույքի 4% սուբսիդավորման դեպքում (2014թ.ին 50հա և 2015թ.ին 100հա նոր այգետարածքների հիմնման 1,2 մլրդ. դրամ ֆինանսավորման հաշվարկով) Այն ենթադրում է սուբսիդավորման գումարի նախատեսում վարկի ամբողջ ժամկետի համար: Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ կառավարություն ՀՀ պետական բյուջեով նախատեսված գյուղատնտեսական վարկերի սուբսիդավորման ծրագրի շրջանակում նախատեսված վարկերի սուբսիդավորման միջոցներից	Վարկավորման մեխանիզմի մշակում – 2013թ. Վարկավորման իրականացում – սկսած 2014թ.-ից
3.1.2. Նոր տեխնիկա և սարքավորումներ ձեռք բերելու համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ, ՀՀ բանկեր և վարկային կազմակերպություններ, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ կառավարություն՝ ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակում	Սկսած 2013թ.-ից

Հիմնախնդիր

Գինեգործական ոլորտի արտադրանքի որակի բարձրացման նպատակը պահանջում է համապատասխան և ժամանակակից հմտություններով մասնագետների առկայություն: Ներկայումս Հայաստանում կրթական հաստատությունները չեն ապահովում ոլորտի ժամանակակից պահանջներին բավարարող շրջանավարտների պատրաստում և բազմաթիվ գինեգործական ընկերություններ ունեն որակյալ մասնագետների պակասի խնդիր:

«Կարողությունների զարգացում» ռազմավարական նախաձեռնության հիմնական նպատակն է մշակել մեխանիզմներ, որոնք կնպաստեն շրջանավարտների և աշխատող մասնագետների կարողությունների և հմտությունների զարգացմանն ու համապատասխանեցմանը ժամանակակից արտադրության պահանջներին:

Հիմնական գործողություններ

- Գինեգործների վերապատրաստում՝ ծանոթացնելով առաջատար գինեգործական տեխնոլոգիաներին և փորձին
- Գինեգործության ոլորտում ժամանակակից կրթական կարողությունների ձևավորում՝ ապահովելով ոլորտին ժամանակակից գիտելիքներով երիտասարդ մասնագետներով

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
4.1 Մասնագետների պատրաստման և վերապատրաստման մեխանիզմների բարելավում	Գինեգործության ոլորտում միջազգային չափանիշներին համապատասխան որակավորում և վերապատրաստում անցած մասնագետների առկայություն

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
4.1.1. Մասնագետ-գինեգործների վերապատրաստման թրեյնինգների և սեմինարների կազմակերպում և անցկացում (5-6 մասնագետ տարեկան)	Հայաստանի պետական ագրարային համալսարան, «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ 10-12 մլն. ՀՀ դրամ տարեկան Ֆինանսավորման աղբյուր՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն, մասնակիցներ, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Ամենամյա
4.1.2. Գինեգործության ոլորտում կրթական ծրագրի մշակում և իրականացում համագործակցելով գինեգործության ոլորտում առաջատար արտերկրյա համալսարաններից մեկի հետ: i. Համալսարանների ընտրություն և բանակցություններ համատեղ կրթական ծրագրի մշակման համար ii. Գործունեության ծրագրի կազմում և ֆինանսավորման ապահովում iii. Ծրագրի մշակում, տեղայնացում և փորձարկում, դասախոսների վերապատրաստում iv. Դասընթացների իրականացում	Հայաստանի պետական ագրարային համալսարան, «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն , Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ նախնական գնահատական 30-35 մլն. ՀՀ դրամ Ֆինանսավորման աղբյուր՝ Դոնոր կազմակերպություններ, ուսանողների վարձավճարներ, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ Առկա է նախնական համաձայնություն Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ, որն ենթակա է հետագա հաստատման:	Նախապատրաստում՝ 2013 -2014թթ. Ուսումնական ծրագրի մեկնարկ 2014-2015թթ. ուստարի

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
4.1 Մասնագետների պատրաստման և վերապատրաստման մեխանիզմների բարելավում	Գինեգործության ոլորտում միջազգային չափանիշներին համապատասխան որակավորում և վերապատրաստում անցած մասնագետների առկայություն

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
4.1.3. Մասնագետ-գինեգործների արտերկիր ուսումնա-ճանաչողական այցելության պարբերական իրականացման հնարավորության գնահատում և իրագործում	Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Դոնոր կազմակերպություններ	Ամենամյա

Հիմնախնդիր

Միջազգային շուկաներում գինիները մրցակցում են երկրների մակարդակով: Հայաստանը որպես այդպիսին չունի գինեգործական երկրի համբավ և առանձին արտադրողներ ունեն իրենց արտադրանքի առաջմղման խնդիրներ՝ կապված երկրի իմիջի բացակայության հետ: Անհրաժեշտ է միջազգային շուկաներում ստեղծել և առաջ մղել Հայաստանի՝ որպես գինեգործական երկրի իմիջը, ինչը պահանջում է կոորդինացված ջանքեր ոլորտի և պետության կողմից: Կրիտիկական խնդիրներից մեկն է ապահովել նաև արտահանվող գինու բարձր որակը, քանի որ ոչ որակյալ արտադրանքը կարող է բացասաբար անդրադառնալ ամբողջ երկրի իմիջի վրա:

«Միջազգային շուկաներում առաջմղում» ռազմավարական նախաձեռնության հիմնական նպատակն է համալիր գործողությունների միջոցով ստեղծել և առաջ մղել հայկական գինու իմիջը միջազգային շուկաներում՝ միաժամանակ ապահովելով արտահանվող գինու որակը:

Արդյունքում ակնկալվում է նպատակային միջազգային շուկաներում ձևավորել Հայաստանի՝ որպես գինեգործական երկրի իմիջ և 2020 թվականին հասնել շուրջ 30 մլն. դոլար արտահանման:

Հիմնական գործողություններ

- Արտահանվող գինու որակը ապահովող և միջազգային առաջխաղացման ջանքերը կոորդինացնող «Հայաստանի գինիներ» (Wines of Armenia) միության ստեղծում
- Հայկական գինու իմիջի ձևավորում նպատակային շուկաներում
- Նպատակային շուկաներում Հայկական գինու համակարգված առաջմղման գործողությունների իրականացում
- Արտահանվող գինիների որակի բարելավման ինքնակարգավորման մեխանիզմների ձևավորում

«Հայաստանի գինիներ» (Wines of Armenia) միություն. նպատակներ, կառուցվածք, գործառույթներ

Միությունը կլինի անկախ կառույց, որի հիմնական նպատակները կլինեն.

- միջազգային շուկաներում հայկական գինիների առաջմղման գործողությունների համակարգում
- արտահանվող գինու որակի ապահովում

Միության անդամներ կարող են լինել բոլոր արտահանող գինի արտադրողները, համաձայն միության կանոնադրության պահանջների: Միության խորհրդում պետությանը լիազոր ներկայացուցիչը ներկայացված կլինի խորհրդատվական ձայնի իրավունքով:

Միությունը Զարգացման հայկական գործակալության հետ հայկական գինիներին կտրամադրեն «Wines of Armenia» ապրանքանիշի օգտագործման իրավունքը, եթե նրանց արտադրանքը համապատասխանում է որակի սահմանված չափանիշներին:

Չափանիշները կսահմանվեն և կհստակեցվեն միության կողմից՝ պետության լիազոր մարմնի հետ համատեղ և դրանց հիմքում ընկած կլինեն.

- լաբորատոր փորձաքննության դրական եզրակացությունը՝ կանոնակարգերով սահմանված բոլոր պահանջներին գինու բավարարելու վերաբերյալ
- գինու համապատասխանությունը պիտակավորման պահանջներին:

Նշում՝ տարբեր երկրներում գործող արտահանումը խթանող կառույցների համեմատական վերլուծությունը ներկայացված է Հավելված 1-ում:

Միության չձևավորման դեպքում վերոհիշյալ գործառույթների իրականացման հիմնական պատասխանատուն կլինի Զարգացման հայկական գործակալությունը:

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
5.1 «Հայաստանի գինիներ» (Wines of Armenia) միության հիմնադրում	Միջազգային առաջմղման գործողությունները համակարգող և արտահանվող արտադրանքի որակը վերահսկող անկախ կառույցի առկայություն

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
5.1.1 «Հայաստանի գինիներ» միության հիմնադրում՝ կազմված արտահանող գինի արտադրողներից և ՀՀ կառավարության ներկայացուցիչներից:	Արտահանող ընկերություններից կազմված նախաձեռնող խումբ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն Զարգացման հայկական գործակալություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ	Բյուջե՝ կգնահատվի գործողությունների ծրագրի և օպերացիոն մոդելի և ծախսերի հաստատումից հետո Ֆինանսավորման աղբյուր՝ Մասնակից ընկերությունների վճարներ Դոնոր կազմակերպություններ	Միության հիմնում վերջնաժամկետ՝ 2013թ. հուլիս

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
5.2 Մասնակցություն միջազգային ցուցահանդեսների՝ միասնական «Հայկական գինիներ» հովանոցային բրենդով	Միջազգային շուկաներում՝ մասնավորապես՝ նպատակային շուկաներում (Ռուսաստան և Չինաստան) հայկական գինու բրենդի ճանաչողության զարգացում և գործարար կապերի հաստատում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
5.2.1. Միասնական «Հայկական գինիներ» հովանոցային բրենդի հայեցակարգի ստեղծում՝ ներգրավելով պրոֆեսիոնալ խորհրդատվական գործակալություն: Կմշակվի «Հայկական գինիներ» ապրանքանիշ, որը գրանցվի պետության կողմից և անվճար կտրամադրվի «Հայկական գինիներ» միությանը օգտագործման համար:	Զարգացման հայկական գործակալություն, «Հայաստանի գինիներ» միություն, Արդյունեբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ նախնական, որը կճշգրտվի մրցույթի մասնակիցների առաջարկություններով Աղբյուր՝ ՀՀ կառավարություն՝ 15 մլն. ՀՀ դրամ, դոնոր կազմակերպություններ	Հայեցակարգի ստեղծման վերջնաժամկետ՝ 2014թ. դեկտեմբեր

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
5.2 Մասնակցություն միջազգային ցուցահանդեսների՝ միասնական «Հայկական գինիներ» հովանոցային բրենդով	Միջազգային շուկաներում՝ մասնավորապես՝ նպատակային շուկաներում (Ռուսաստան և Չինաստան) հայկական գինու բրենդի ճանաչողության զարգացում և գործարար կապերի հաստատում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
5.2.2. Միջազգային ցուցահանդեսներին մասնակցություն՝ «Հայկական գինիներ» հովանոցային բրենդով՝ ընդհանուր տաղավարով Նախապայման՝ առնվազն 5 ընկերությունների մասնակցություն (հնարավոր է նաև կոնյակի ներկայացում), Բացառիկ դեպքերում շեմից ցածր մասնակցությունը կարող է քննարկվել և հաստատվել ոլորտի խորհրդի կողմից -Մասնակցություն ПродЭкспо ցուցահանդեսին՝ Մոսկվայում -Մասնակցություն Չինաստանի ցուցահանդեսներից որևէ մեկին՝ Շանհայի գինու և սպիրտային խմիչքների միջազգային ցուցահանդես, Հոնկ-Կոնգի գինու և սպիրտային խմիչքների միջազգային ցուցահանդես, Գուանչժոուի WINEXPO ցուցահանդես -Մասնակցություն ProWein ցուցահանդեսին Դյուսելդորֆում՝ միջազգային ճանաչողություն խթանելու նպատակով, սկսած երկրորդ տարվանից	Զարգացման հայկական գործակալություն, «Հայաստանի գիններ» միություն, Արդյունեբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ 80 մլն. ՀՀ դրամ առաջին տարին, 120 մլն. ՀՀ դրամ տարեկան սկսած երկրորդ տարվանից Որպես ընդհանուր սկզբունք աղբյուր՝ 50% - ՀՀ կառավարություն, 50% - մասնակից ընկերություններ, դոնոր կազմակերպություններ Մասնաբաժնի որոշակի փոփոխություն հնարավոր է՝ հաշվի առնելով կոնկրետ ցուցահանդեսի մասնակցության առանձնահատկությունները, որոնք կարող են քննարկվել և հաստատվել ոլորտի խորհրդի կողմից	Ամենամյա պարբերական մասնակցություն Ռուսաստանի և Չինաստանի ցուցահանդեսներում: Սկիզբ՝ 2013թ.: Ամենամյա պարբերաբար մասնակցություն ProWein ցուցահանդեսին: Սկիզբ՝ 2014 թ. դեկտեմբեր Ցուցահանդեսին նախապատրաստությունը՝ յուր. տարի, ցուցահանդեսից առաջ 6 ամսվա ընթացքում

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
5.3 Համտեսների կազմակերպում նպատակային շուկաներում	Ռուսաստանի և Չինաստանի հիմնական խոշոր քաղաքներում հայկական գինու մասին տեղեկատվության տարածում, իմիջի զարգացում և գործարար կապերի հաստատում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ Ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
5.3.1 Ռուսաստանում և այլ թիրախային շուկաներում տարեկան 2-3 համտեսների կազմակերպում(հնարավոր է նաև կոնյակի ներկայացում)՝ թիրախելով հիմնական գնորդների խմբերին: Միջոցառմանը հրավիրվում են պոտենցիալ գնորդներ և ոլորտի մասնագետներ, այդ թվում գինու մեծածախ և մանրածախ վաճառողներ, դիստրիբուտորներ, սոմելյեներ, ռեստորանների ներկայացուցիչներ: *Որպես օրինակ կարող են ծառայել տարբեր երկրների կողմից նպատակային շուկաներում կազմակերպվող նմանատիպ միջոցառումները՝ օր. Չիլիի գինիներ միությունը (Wines of Chile) իր ինտերնետային կայքի վրա տեղադրում է ընթացիկ տարվա ընթացքում նախատեսվող բոլոր համտեսների և այլ նմանատիպ միջոցառումների ժամանակացույցը՝ ըստ բոլոր նպատակային շուկաների:*	Զարգացման հայկական գործակալություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ «Հայաստանի գինիներ» միություն, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ	Բյուջե՝ 80 մլն ՀՀ դրամ (տարեկան) Աղբյուր՝ 50% - ՀՀ կառավարություն, 50% -մասնակից ընկերություններ	Ամենամյա պարբերական մասնակցություն: Սկիզբ՝ 2013թ. Համտեսին նախապատրաստությունը՝ համտեսից առաջ 4 ամսվա ընթացքում

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
5.4 «Հայկական գինիներ» ինտերնետային կայքի ստեղծում	Միջազգային մակարդակով և նպատակային շուկաներում հայկական գինու մասին տեղեկատվության տարածում և ճանաչելիության խթանում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ Ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
5.4.1 «Հայկական գինիներ» ինտերնետային բազմալեզու պորտալի ստեղծում, որի նպատակն է հայկական գինեգործության ավանդույթների և արտադրողների մասին տեղեկատվության ապահովումը և առաջմղումը համացանցում: Կայքի բնութագիրը պետք է համահունչ լինի Միասնական Հայկական Գինիներ բրենդինգի հայեցակարգի դրույթներին, առնվազն եռալեզու՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն (հաջորդ փուլում նաև չինարեն կամ այլ), պարունակի տեղեկատվություն Հայաստանի և հայկական գինեգործության, արտադրողների և նրանց կոնտակտային տվյալների, ինչպես նաև գինու արտահանման խորհրդի վերաբերյալ: *Նշում՝ որպես օրինակ կարող են ծառայել տարբեր երկրների Գինու ասոցիացիաների կայքերը.* *Ավստրալիա՝ http://www.wineaustralia.com/australia/, http://www.winesa.asn.au/* *Արգենտինա՝ http://www.winesofargentina.org/,* *Չիլի՝ http://www.winesofchile.org/* *Հրվ. Աֆրիկա՝ http://www.sawis.co.za*	Զարգացման հայկական գործակալություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ «Հայաստանի գինիներ» միություն	Բյուջե՝ կայքի ստեղծում՝ 2.5 մլն ՀՀ դրամ, կայքի սպասարկում և թարմացում՝ 1.5մլն ՀՀ դրամ տարեկան Աղբյուր՝ ՀՀ կառավարություն Դոնոր կազմակերպություններ	*Սկիզբը՝ 2013թ. Հուլիս – ավարտը պետք է զուգակցվի Միասնական Հայկական Գինիներ բրենդինգի հայեցակարգի հաստատման գործընթացին՝ 2014թ. դեկտեմբեր* *Նշում՝ կայքի գործարկումը և թարմացումը պետք է կրի շարունակական բնույթ*

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
5.5 Շուկաների հետազոտությունների և վերլուծությունների տրամադրում արտադրողներին	Արտադրողների կողմից արտահանման վերաբերյալ տեղակացված որոշումների ընդունում

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
5.5.1 Չինաստանի գինու շուկայի ուսումնասիրություն, շուկայի թիրախային սեգմենտների բացահայտում և մուտքի ռազմավարության մշակում:	Զարգացման հայկական գործակալություն, «Հայաստանի գինիներ» միություն ՕգտագործելովՉինաստանի շուկայի վերաբերյալ տեղեկատվության հնարավոր աղբյուրները	Բյուջե՝ 25 մլն. ՀՀ դրամ Աղբյուր՝ դոնոր կազմակերպություններ	2013թ. հունիս -սեպտեմբեր
5.5.2 Չինաստանի և Ռուսաստանի գինու շուկաների հետազոտությունների և վերլուծությունների ձեռքբերում և տրամադրում ընկերություններին՝ ըստ անհրաժեշտության հայերեն կամ ռուսերեն թարգմանությամբ *Նշում՝ Euromonitor International (Passport GMID) հանդիսանում է միջազգային մակարդակով պարբերական թարմացվող տեղեկատվական վերլուծական շտեմարան , ինչպես նաև IWSR International Wine and Spirits Research-ը հանդիսանում է ոլորտի վերաբերյալ մասնագիտացած մարքեթինգային հետազոտություններ հրապարակող ամենահեղինակավոր ընկերություն:*	Զարգացման հայկական գործակալություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, «Հայաստանի գինիներ» միություն	Տես կոնյակագործության գործողությունների ծրագրի 2.1.1 կետը Նշում՝ ձեռքբերումն իրականացվելու է Ծրագրերից մեկով	Պարբերական գործողություն, սկիզբը՝ 2013 թ. չորրորդ եռամսյակ պարբերականություն՝ յուրաքանչյուր տարի չորրորդ եռամսյակ կամ ըստ նյութերի տարեկան արդյունքների հրապարակման
5.5.3 Օրգանական գինիների* միջազգային շուկայի ուսումնասիրություն և հայկական արտադրողների համար հնարավորությունների գնահատում:	Զարգացման հայկական գործակալություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն Ագրարային Համալսարանի «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամ, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, «Հայաստանի գինիներ» միություն	Բյուջե՝ 5 մլն. ՀՀ դրամ Աղբյուր՝ ՀՀ կառավարություն Դոնոր կազմակերպություններ	2014 թ. հունվար – սեպտեմբեր

** Համաձայն միջազգային լայնորեն տարածված սահմանման օրգանական են համարվում գինիները, որոնք պատրաստված են խաղողից, որի մշակման ընթացքում չեն օգտագործվել արհեստական պարարտանյութեր և հերբիցիդներ:*

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
5.6 Հայկական գինիների առաջմղում մասնագիտական մամուլում և հրապարակումներում	Միջազգային մակարդակով գինու մասնագիտական շրջանակներում հայկական գինիների ճանաչողության ապահովում և հեղինակության աճ

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
5.6.1 Միջազգային մասնագիտացված ամսագրերի լրագրողների համար գինու շրջագայությունների և համտեսների կազմակերպում Հայաստանում -տարեկան 1 շրջագայություն 5 օր տևողությամբ, 2-3 հոգանոց խմբի համար՝ Արենի գինու փառատոնի անցկացման ընթացքում	Զարգացման հայկական գործակալություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, «Հայաստանի գինիներ» միություն ««Արենի» փառատոն» հիմնադրամ	Բյուջե՝ 10 մլն. ՀՀ դրամ տարեկան Աղբյուր՝ դոնոր կազմակերպություններ	Պարբերաբար ամենամյա գործողություն: Սկիզբ՝ 2013թ. հոկտեմբեր
5.6.2. Անհատական աշխատանք գինու միջազգային համբավ ունեցող մի քանի ընտրված մասնագետների հետ՝ նրանցից հայկական գինու վերաբերյալ կարծիք ստանալու և նրանց կողմից 2-3 հեղինակավոր մասնագիտական ամսագրերում հայկական գինու մասին հրապարակումների համար:	Զարգացման հայկական գործակալություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, «Հայաստանի գինիներ» միություն ««Արենի» փառատոն» հիմնադրամ,	Բյուջե՝ 2-3 մլն. ՀՀ դրամ Աղբյուր՝ ՀՀ կառավարություն, ընկերություններ և դոնոր կազմակերպություններ	Մասնագետների ընտրություն՝ 2013թ.: Անհատական աշխատանքների սկիզբ՝ 2013թ.

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
5.7 Գինու զբոսաշրջության զարգացում Հայաստանում	Գինու զբոսաշրջության, որպես Հայաստանում զբոսաշրջության ուղղություններից մեկի զարգացում և Հայաստանի միջազգային դիրքավորում որպես գինու զբոսաշրջության երկիր:

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
5.7.1 Տուրիստական գործակալությունների հետ համագործակցություն և գինու զբոսաշրջային փաթեթների մշակում ընկերությունների հետ համատեղ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Զարգացման հայկական գործակալություն, Հայաստանի Ազգային մրցունակության հիմնադրամ, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ ««Արենի» փառատոն» հիմնադրամ, Ներգնա և արտագնա տուրոպերատորների միություն	- Դոնոր կազմակերպություններ	Պարբերաբար ամենամյա գործողություն: Սկիզբ՝ 2013 թ.
5.7.2. Գինու զբոսաշրջության մասնագետի հրավերք արտերկրից՝ տեղական գինեգործական ընկերություններին զբոսաշրջության զարգացման ուղղությամբ խորհրդատվություն մատուցելու նպատակով:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Զարգացման հայկական գործակալություն, Հայաստանի Ազգային մրցունակության հիմնադրամ, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, ««Արենի» փառատոն» հիմնադրամ	Բյուջե՝ 4 մլն. ՀՀ դրամ Աղբյուր՝ 50% - ՀՀ կառավարություն, 50% - խորհրդատվություն ստացող ընկերություններ Միայն 2013-2014 թթ.	Մասնագետի ընտրություն՝ 2013թ.: Մանսագետի հրավեր Հայաստան՝ 2013թ. և 2014թ. մարտ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
5.8 Նպատակային շուկաներում հայկական գինու օրվա անցկացում	Նպատակային շուկաներում հայկական գինիների ճանաչողության աճ:

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ Ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
5.8.1 Նպատակային շուկաներում Հայաստանի դեսպանությունների կողմից տարին մեկ անգամ հայկական գինու օրվա կազմակերպման ծրագրի մշակում: Հայկական գինու օրվա շրջանակներում ենթադրվում է գինու (հնարավոր է նաև կոնյակի) հյուրասիրություն տվյալ երկրի պաշտոնատար անձանց և ոլորտի հետ առընչվող բիզնեսի ներկայացուցիչների համար: Ծրագիրը պետք է հստակեցնի դեսպանատների և մասնավոր ընկերությունների համագործակցության ձևաչափերը և մեխանիզմները և հայկական գինու կոնկրետ օրերի որոշման մեխանիզմը:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ ԿԱ ՊԵԿ, Զարգացման հայկական գործակալություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, «Հայաստանի գինիներ» միություն, ««Արենի» փառատոն» հիմնադրամ, ոլորտների ընկերություններ	-	Վերջնաժամկետ՝ 2013թ. սեպտեմբեր
5.8.2. Նպատակային շուկաներում Հայաստանի դեսպանությունների կողմից տարին մեկ անգամ հայկական գինու օրվա անցկացում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, Զարգացման հայկական գործակալություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, «Հայաստանի գինիներ» միություն ««Արենի» փառատոն» հիմնադրամ, ոլորտների ընկերություններ (Կոնյակագործների միություն)	Բյուջե՝ գնահատման կարիք հայկական գինու օրվա կազմակերպման ծրագրի արդյունքների հիման վրա Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ կառավարություն, մասնակից ընկերություններ	Տարին մեկ անգամ սկսած 2013 թ.

Հիմնախնդիր

Հայկական գինու ներկայիս հաճախ ոչ բարձր որակի հիմնական պատճառներից մեկը Հայաստանում գինու նկատմամբ պահանջարկի թույլ զարգացվածության աստիճանն է, երբ սպառողների մեծամասնությունը չունի խիստ, կոնկրետ արտահայտված պահանջներ սպառվող գինու որակի նկատմամբ: Ի լրումն, Հայաստանում մեկ շնչին ընկնող գինու սպառումը շատ ցածր է և բազմաթիվ անգամներ զիջում է այլ գինեգործական երկրների ցուցանիշներին, ինչպես նաև օղու և գարեջրի Հայաստանում սպառման ծավալներին:

«Գինու սպառման մշակույթի խթանում Հայաստանում» ռազմավարական նախաձեռնության հիմնական նպատակն է բարձրացնել բնակչության տեղեկացվածությունը գինու վերաբերյալ և ձևավորել որակյալ գինու նկատմամբ տեղական պահանջարկ:

Արդյունքում ակնկալվում է որ առավել տեղեկացված բնակչությունը ավելի շատ կսկսի սպառել գինի և առավել պահանջկոտ կլինի սպառվող գինու որակի նկատմամբ:

Հիմնական գործողություններ

- Գինու փառատոնների և տոնավաճառների կազմակերպում

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
6.1 Գինու փառատոնների և տոնավաճառների անցկացում Հայաստանում	Գինու փառատոնների կանոնավոր անցկացում և դրանց մասին հասարակության լայն շերտերի տեղեկացվածություն

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
6.1.1. Արենիում անցկացվող գինու փառատոնի մասշտաբայնացում: • Գինու զբոսաշրջային տուրերի կազմակերպում • Աջակցություն անհատ գինի արտադրողներին՝ հատուկ դիզայնով շշերով և փաթեթավորմամբ ապահովման և խաղողի թանգարանի ստեղծման գործում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, ««Արենի» փառատոն» հիմնադրամ Հայաստանի գինեգործների միություն Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների աջակցման ազգային կենտրոն ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ	Բյուջե՝ գնահատման կարիք Աղբյուր՝ ՀՀ կառավարություն, զբոսաշրջային գործակալություններ	Ամենամյա պարբերաբար գործողություն՝ սկիզբ 2013 թ. երկրորդ կիսամյակ
6.1.2. Գինու տոնավաճառի կազմակերպում Երևանի շրջակա բնակավայրերից մեկում Այն հիմնականում միտված է լինելու Արարատյան դաշտավայրի, Արագածոտնի գինեգործների արտադրանքի ներկայացմանը:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, ««Արենի» փառատոն» հիմնադրամ Հայաստանի գինեգործների միություն	Բյուջե՝ գնահատման կարիք Աղբյուր՝ ՀՀ կառավարություն, միջոցառման հովանավոր կազմակերպություններ	Ամենամյա պարբերաբար գործողություն՝ սկիզբ 2013 թ. ամառ - աշուն

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Հիմնական մարմինները և գործառույթները

- Ռազմավարության արդյունավետ իրականացումն ենթադրում է պետական կառավարման համակարգի բոլոր օղակների ներդաշնակ համագործակցություն և սոցիալ-տնտեսական այլ ռազմավարությունների հետ արդյունավետ ինտեգրում: Բացի այդ, հաջողության կարևոր գրավականներից է ոլորտի առանցքային շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը պլանավորումից մինչև իրականացում:
- Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ին ընդունված «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն» թիվ 49 արձանագրային որոշմամբ սահմանվեցին արդյունաբերական քաղաքականության իրականացումն ապահովող հիմնական մարմինները և դրանց գործառույթները:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ	ԴԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ	Արդյունաբերական քաղաքականության շրջանակում ՀՀ պետական կառույցների գործունեության համակարգում և գործողությունների ներդաշնակեցում:
ԳԻՆՈՒ ԵՎ ԿՈՆՅԱԿԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ	Ընդգրկելով ոլորտի ներկայացուցիչներին՝ հարթակ կհանդիսանան պետության և մասնավոր հատվածի միջև պրոֆեսիոնալ երկխոսության և գործողությունների համակարգման համար:
ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը արդյունաբերական քաղաքականության մշակման և իրագործման ապահովման պատասխանատուն է: Այն իրականցնում է արդյունաբերական խորհրդի քարտուղարության գործառույթը:
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԶՀԳ)	Արդյունաբերական քաղաքականության շրջանակում ԶՀԳ-ն լինելու է ռազմավարության իրականացնող առանցքային կառույցը:

Գինու և կոնյակի ռազմավարական խորհուրդը.

- Հաստատում է ոլորտային ռազմավարությունները
- Քննարկում և հաստատում է գործողությունների տարեկան ծրագրերը և հիմնական կատարողական ցուցանիշները՝ ելնելով ոլորտային ռազմավարությունից
- Քննարկում և հաստատում է տարեկան գործողությունների ծրագրի կատարողական հաշվետվությունը
- Քննարկում և արդյունաբերական խորհրդին է ներկայացնում առաջարկություններ ոլորտին առնչվող կարգավորման դաշտում փոփոխությունների վերաբերյալ
- Ապահովում է անընդհատ հետադարձ կապ նոր հնարավորությունների և առաջացած խնդիրների վերաբերյալ

Ոլորտային խորհրդի քարտուղարություն

Ոլորտային խորհրդի գործունեությունը համակարգելու և կազմակերպելու նպատակով կստեղծվի 4-5 մարդուց բաղկացած քարտուղարություն պետության և մասնավոր հատվածի ներկայացուցիչներից:

Որոշումների կայացում

Որոշումների կայացման ժամանակ գերակայություն կտրվի համընդհանուր փոխհամաձայնությանը:

Նիստերի գումարումը

Առաջին տարում խորհրդի ժողովները գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ, հաջորդ տարիներին՝ եռամսյակը մեկ: Ըստ անհրաժեշտության կարող են գումարվել արտահերթ նիստեր՝ նախաձեռնված ոլորտի ներկայացուցիչների կամ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:

Ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման գնահատում

Ոլորտային ռազմավարությունների համար սահմանվում են ոլորտային ռազմավարական ցուցանիշներ և համապատասխան դիտանցման մեխանիզմներ:

Օպերատիվ ցուցանիշները սահմանվում են ըստ նախաձեռնությունների՝ ելնելով նախաձեռնությունների նպատակներից, որոնց դիտանցումը և գնահատումն իրականացվում է տարեկան կտրվածքով:

Բյուջեի ընդհանրական ցուցանիշները (նախնական գնահատական)*

		2012	2013	2014	2015	2012-2015
Ընդամենը Գործողությունների պլանի բյուջե	հազ. ՀՀ դրամ	0	285,500	405,500	360,000	**1,051,000**
Պետության ֆինանսավորմամբ	հազ. ՀՀ դրամ	0	155,250	147,250	171,750	**474,250**
	%	0	54%	36%	48%	45%
Այլ աղբյուրների ֆինանսավորմամբ	հազ. ՀՀ դրամ	0	130,250	258,250	188,250	**576,750**
	%	0	46%	64%	52%	54.9%

Ծախսերի բաշխումն ըստ գործողությունների ուղղությունների

	2012	2013	2014	2015	2012-2015
ՌՈՒ 1. Հումքի ապահովում	**0**	**51,500**	**114,500**	**81,000**	**247,000**
ՌՆ 1.1. Այգետարածքների գույքագրում և մոնիտորինգի վարում	0	34,000	3,000	3,000	40,000
ՌՆ 1.2. Բնական աղետների և հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացում*	0	4,000	0	0	4,000
ՌՆ 1.3. Խաղողի սորտերի բարելավման և սելեկցիայի ուղղությամբ հետազոտական աշխատանքներ	0	13,500	111,500	78,000	203,000
ՌՆ 1.4. Խաղողագործության զարգացման ծրագրի մշակում	0	0	0	0	0
ՌՈՒ 2. Իրավական դաշտի բարելավում	**0**	**0**	**5,500**	**5,500**	**11,000**
ՌՆ 2.1. Օրենսդրության համապատասխանեցում եվրոպական կանոնակարգերին	0	0	0	0	0
ՌՆ 2.2. Միջազգային չափանիշներով լաբորատոր ենթակառուցվածքի ապահովում	0	0	0	0	0
ՌՆ 2.3. Անդամակցում խաղողի և գինու միջազգային կազմակերպությանը	0	0	5,500	5,500	11,000
ՌՈՒ 3. Ֆինանսական աջակցություն	**0**	**0**	**16,000**	**48,000**	**64,000**
ՌՆ 3.1. Խաղողագործության և գինեգործության ֆինանսավորման մեխանիզմներ	0	0	16,000	48,000	64,000
ՌՈՒ 4. Կարողությունների զարգացում	**0**	**12,000**	**47,000**	**12,000**	**71,000**
ՌՆ 4.1. Մասնագետների պատրաստում և վերապատրաստում	0	12,000	47,000	12,000	71,000
ՌՈՒ 5. Միջազգային շուկաներում առաջմղում	**0**	**222,000**	**222,500**	**213,500**	**658,000**
ՌՆ 5.1. «Հայկական գինիներ» միության ստեղծում	0	0	0	0	0
ՌՆ 5.2. Մասնակցություն միջազգային ցուցահանդեսներին	0	95,000	120,000	120,000	335,000
ՌՆ 5.3. Համտեսների կազմակերպում միջազգային շուկաներում	0	80,000	80,000	80,000	240,000
ՌՆ 5.4. "Հայկական գինիներ" ինտերնետային կայքի ստեղծում	0	2,500	1,000	1,000	4,500
ՌՆ 5.5. Շուկաների հետազոտությունների տրամադրում	0	27,500	7,500	2,500	37,500
ՌՆ 5.6. Հայկական գինիների առաջ մղում մասնագիտական մամուլում	0	13,000	10,000	10,000	33,000
ՌՆ 5.7. Գինու զբոսաշրջության զարգացում Հայաստանում*	0	4,000	4,000	0	8,000
ՌՆ 5.8. Հայկական գինու օրվա կազմակերպում նպատակային շուկաներում*	0	0	0	0	0
ՌՈՒ 6. Գինու սպառման մշակույթի խթանում Հայաստանում	0	0	0	0	0
ՌՆ 6.1. Գինու փառատոնների անցկացում Հայաստանում	0	0	0	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ	**0**	**285,500**	**405,500**	**360,000**	**1,051,000**

* Որոշ գործողությունների ֆինանսավորման գնահատականը կախված է հավելյալ ուսումնասիրության արդյունքներից, որոնք նախատեսված են գործողությունների ծրագրում, և չեն ներառվել բյուջեի նախագծում:

ՀԱՎԵԼՎԱԾ

Տարբեր երկրներում գործող արտահանումը խթանող կառույցների համեմատական վերլուծություն

Երկիր	Կառույցի անվանում	Կազմակերպական ձև/անդամակցություն	Հիմնական գործառույթներ	Ֆինանսավորման աղբյուր
Ավստրալիա	Australia Wine Export Council	Պետական կառույց Խորհրդի 7 անդամներ նշանակվում էն պետության կողմից, ևս 8 անդամ նշանակվում է ոլորտի ներկայացուցիչների կողմից ընտրված կոմիտեի կողմից: Խորհուրդը նշանակում է գործադիր տնօրենին	Արտահանվող գինու որակի վերահսկում, շուկայի վերլուծությունների իրականացում, ավստրալիական գինու առաջխաղացում աշխարհում: Արտահանվող գինու յուրաքանչյուր խմբաքանակ ստուգվում է և ստանում է արտահանման լիցենզիա, առանց որի չի թույլատրվում արտահանել:	Պետական ֆինանսավորում՝ գինու արտադրության հարկ և գինու արտահանման հարկ: Կառույցին կից գործում է ծրագիր, որը պարբերաբար դրամահավաք է կազմակերպում մասնավոր միջոցներից:
Չիլի	Wines of Chile	Անկախ կառույց, ոլորտի արտադրողների նախաձեռնություն: Ներկայումս ներառում է ոլորտի արտադրողների 90%- ին:	Չիլիական գինու առաջխաղացում միջազգային շուկաներում՝ ընդհանուր չիլիական գինիներ հովանոցային բրենդով, մարքեթինգային տեղեկատվության տրամադրում արտադրողներին	Ընդհանուր բյուջեն՝ 6 մլն. ԱՄՆ դոլար տարեկան (Չիլիի գինու արտահանման 1%): Բյուջեի 85% ֆինանսավորվում է անդամների կողմից կատարվող վճարներով, 15% տրամադրում է պետությունը՝ արտահանման զարգացման պետական գործակալության միջոցներից:
Արգենտինա	Wine of Argentina	Անկախ կառույց, ոլորտի արտադրողների նախաձեռնություն: Անդամակցելու համար անհրաժեշտ է արտահանող լինել: Ակտիվ համագործակցություն պետական մարմինների հետ՝ ոլորտի ընդհանուր զարգացմանն ուղղված քայլերի շուրջ	Արգենտինական գինու առաջխաղացում միջազգային շուկաներում՝ ընդհանուր արգենտինական գինիներ հովանոցային բրենդով, մարքեթինգային տեղեկատվության տրամադրում արտադրողներին:	Ֆինանսավորվում է անդամների կողմից կատարվող վճարներով, պարբերաբար ստանում է դրամաշնորհներ պետությունից: Դրամաշնորհների աղբյուրը՝ գինու արտահանման հարկ: 2010 թ. պետական օգնությունը կազմել է մոտ 3.5 մլն. դոլար:
Հարավային Աֆրիկա	WOSA (Wines of South Africa) Wines and Spirits Board	Անկախ, շահույթ չհետապնդող կառույց, անդամակցում էն են բոլոր գինու արտադրող- արտահանողները: Պետության կողմից ճանաչվում է որպես գինու արտահանման խորհուրդ և համագործակցում է պետական գինիների և սպիրտային խմիչքների խորհրդի հետ: Պետական գինիների և սպիրտային խմիչքների արտադրությունն ու արտահանումը վերահսկող կառույց	Հարավ Աֆրիկյան գինիների առաջխաղացում աշխարհում, գինու զբոսաշրջության առաջմղում, մարքեթինգային սեմինարների կազմակերպում և տեղեկատվության տրամադրում անդամներին: Արտահանվող գինու յուրաքանչյուր խմբաքանակ ստուգվում է արտահանման խորհրդի կողմից և ստանում լիցենզիա առանց որի չի թույլատրվում արտահանել:	Ֆինանսավորվում է պետության կողմից՝ գինու արտահանման հարկ: